



ԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**ՀԱՅԿԱԿԱՆ
[ՀԱՄԱ]
ՏԵՔՍՏԵՐՈՒՄ**

Ներածություն

Հայաստանի այն սոցիալ-քաղաքական համակարգը, որ 2018-ի գարնան սկզբին հավերժական էր թվում, մի իրադարձությամբ, որ անվանում ենք Հեղափոխություն, մտել է մեծ շրջադարձի հուն: Այս իրադարձությունը, անկախ ընթացքից և արդյունքներից, մեր հասարակության կյանքում ժամանակի նոր սկզբնակետ է սահմանել: Գլխավորը՝ վերադարձրել է ժամանակի ու պատմականության զգացումը, որ թվում է՝ կորցրել էինք հաստատված ապաքաղաքական իբր-հավերժի մեջ:

Այժմ առավել, քան երբևէ մեր ամենօրյա կյանքում փորձառում ենք սոցիալ-քաղաքական գաղափարների, դիսկուրսների և պրակտիկաների փոխազդու հարափոփոխությունն ու միաժամանակ կարծրությունը, քաղաքական դերակատարների կամքի ու գաղափարական դաշտի փոխառնչությունը: Սա մեզ օգնում է պատկերացնել, թե ինչպիսի բարդ հյուսվածքներում են պատմականորեն ձևավորվել այն գաղափարաբանական մտակառուցվածքները, իրավական և բարոյական նորմերը, որոնցով ապրում է մեր հանրությունն այսօր: Ժամանակին հաստատելով իրենց գերիշխանությունը՝ դրանք այնքան սովորական են դառնում, որ ժամանակակիցներին թվում են բնական և մշտական:

Այս հատորը ներկայացնում է հայկական անցյալում այդպիսի բարդ ու բազմազան, փոփոխական իրականության բացահայտման հետազոտական մի նախագիծ՝ նվիրված այնպիսի զգայուն հարցի, ինչպիսին սեռականությունն է: Միաժամանակ այն ներկայիս հայաստանյան հասարակական-գաղափարական խմորումների մի արտահայտիչն է: Գիրքն ընթերցողին առնչակցում է պատմականորեն ձևավորվող գիտելիքի: Այն հրավիրում է հետևել սեռականության ժամանակակից հղացքի¹ շուրջ հայկական սոցիալ-պատմական կյանքի տարբեր ժամանակահատվածների ըմբռնումների և սահմանումների ընթացքին, դրանց ներհակություններին, ինչպես նաև ժամանակների և տարածությունների հետ դրանց փոխազդեցություններին:

1. Սեռականության ժամանակակից հղացքը ի հայտ է եկել ընդամենը 19-րդ դարում արևմտյան գիտակարգային զարգացումների դաշտում (Փուկո, Մ. (1996). *Воля к истине: по ту сторону знания, власти и сексуальности. Работы разных лет. Пер. с франц.* - М.: Касталь, 271):

Տիրապետող գաղափարները և հիմնահոս քաղաքականությունները հանդես են գալիս մեն-միակ, կուռ և անփոփոխ ավանդույթի դիրքից, այնինչ ունենում են խնամքով թաքցրած հետնախորշեր: Այս գրքի հետազոտող հեղինակներից յուրաքանչյուրն իր առանձին թեմայում դուրս է բերում հայկական համատեքստի այլ՝ բազմազան և փոխակերպվող ավանդույթները և դրանց միջև հայտարարված կամ քողարկված պայքարները: Սրանով բացահայտվում են հայկական մշակույթի բարդություններն ու լարումները, ուրեմն և՛ հարստություններն ու արժանիքները:

Հետազոտական աշխատանքները նաև մերկացնում են մեր ներկայի կյանքը, մտքերը և գաղափարաբանությունները ձևավորող ավանդված մտակառուցվածքներ և մեխանիզմներ՝ փորփրելով պատմաքաղաքական իրադարձությունների շուրջ այսօր գերիշխող դիսկուրսների ուղիները և դրանց քաղաքական համատեքստերն ու նպատակադրումները: Մեր իրականությունում սեռականությանն առնչվող դիսկուրսները լռեցված են կամ շղարշված, դրանք շոշափելն իսկ կամ իշխանական արտոնության մաս է, կամ լուսանցքային զանցառական մարմաջ: Սերն ու սեռը, դրանց ըմբռնումների և դրսևվորումների ժամանակային փոփոխականությունը Հայաստանում դեռևս մնում են նեղ շրջանակների հետաքրքրության և իմացության առարկա այնինչ այս գիտելիքի կարիքը հասունացել է վաղուց:

Գիտելիքի արտադրման և վերարտադրման հաստատված առյանները կենտրոնացված և աստիճանակարգված (հայր)իշխանության տրամաբանության ներքո շարունակում են արտաքսել սեռականության բազմազան ավանդույթները: Շարունակում են խրախուսել հնապաշտական՝ իբր-հավերժ և մենիշխան նահապետական և հետերոնորմատիվ ավանդույթը, գործիքայնացնում այն կուսակցական շահերի համար՝ շրջանցելով դրա թե՛ ներքին գաղափարաբանական հակասությունները, թե՛ իրական կյանքին դրա անհամապատասխանությունը:

Հնապաշտության նկատմամբ առաջադիմական և զանցառական միջամտությունները հայտարարվում են հայկական հանրույթից և մշակութային լուսանցքից դուրս, համարվում են շեղում կամ այլասերում՝ սահմանափակելով քննական մտքի ծավալումները և բազմահարուստ սոցիալական կյանքն ինքնին: Այնինչ քննական մոտեցումն է այն հնարավորությունը, որ մարդկանց իրական կեն-

սափորձերը կբերի մտածումների դաշտ, կձևակերպի գիտական, արվեստային և այլ հրապարակային լեզուներով, կդառնա գիտելիք և, ի վերջո, կստեղծի սուբյեկտների համերաշխ համակեցության ապահով տարածքներ:

Սեռականությունը ոչ միայն անձնական բարդ կենսափորձ է, այլև քաղաքական իշխանությամբ սահմանադրվող հանրային փորձի՝ կանոնների, հարկադրանքի համակարգերի և գիտելիքի ներքո ձևավորվող սուբյեկտի (ինքնա)ճանաչում:

Ինչպես բոլոր այլ մշակույթներում, այնպես էլ հայկական համատեքստում սեռականությանն առնչվող հարցերը ենթարկվել են և՛ առերևույթ, և՛ աներևույթ շրջանակումների և նորմերի, աստվածաբանական մեկնաբանությունների և իրավաքաղաքական կարգավորումների: Սակայն առանձին դեպքերում դրանք հաջողել են գործնականում կամ տեքստերում ճեղքել սահմանափակումները և կարգավորումները: Սեռականությունը, թեև ժամանակակից հղացք է, մարդկային կյանքի բոլոր շրջաններում վերապրվել է և վերաներկայացվել մշակութային տարբեր կերպերով և լեզուներով, հատկապես՝ առասպելական, գրական, հրապարակախոսական, կրոնական և իրավական-նորմատիվային:

Սրանով է պայմանավորված սեռականության սոցիալ-պատմական ուսումնասիրություններում մեր մեթոդաբանական մոտեցումը՝

դիտարկել այն իր հարափոփոխ ընթացքի մեջ, վեր հանել դրա սոցիալ-պատմական սահմանումները՝ իրավաքաղաքական կարգերի, տեղի և ժամանակի տեքստերի և համատեքստի, ըմբռնումների և ձևակերպման փորձերի հետազոտման միջոցով:

Այս մոտեցման հիմքում Միշել Ֆուկոյի՝ գիտելիքի և դիսկուրսների հնագիտության և ծագումնաբանության տեսական մեթոդաբանությունն է, ինչպես նաև սեռականության տեսության հիմնադրույթները:

Ըստ այդմ, խոսել սեռականության՝ որպես պատմական փորձի մասին նշանակում է դրա առանձնահատկության անկյան տակ վերլուծել այն սահմանադրող երեք առանցքը՝ դրան վերաբերող գիտելիքի ձևավորումը, սեռականությունը կարգավորող քաղաքական-իշխանական համակարգերը, սեռականության սուբյեկտի (ինքնա)ճանաչման հնարավոր և անհրաժեշտ ձևերը (Փյոկո 1996, 273):

Դրանք թույլ են տալիս դիտարկել սեռականության շուրջ պատմական մշակութային հարացույցները, տեսնել սեռականության մասին գիտելիքի և իշխանության կարգի հարաբերակցությունը: Նման մոտեցմամբ սեռականի և սոցիալ-մշակութային ու քաղաքական-իշխանական պայքարների համատեքստերի կապերի հողավորումները առավելապես հնարավոր է բացահայտել տեղի բազմազան աղբյուրների՝ պատմական երկերի, գրական ստեղծագործությունների, կրոնական կանոնագրքերի, իրավական փաստաթղթերի, մամուլի և արխիվային նյութերի անմիջական ուսումնասիրման եղանակով: Այս պարագայում հետազոտությունը ներկայանում է նաև իբրև սեփական սոցիալական պատմություն(ներ)ը ճանաչելու փորձ, ինչով էլ պայմանավորված է ոչ միայն բազմազան աղբյուրների ներառումը, այլև հետազոտության ժամանակային ընդգրկումը՝ մինչքրիստոնեական շրջանից մինչև քսաներորդ դար:

Արդի ժամանակներին առնչվող աղբյուրների ընտրության ժամանակ մեր ուշադրության կենտրոնում եղել են նախևառաջ արևելահայ աղբյուրները (դրանք ուսումնասիրվել են արևմտահայ և այլ աղբյուրների հետ հարաբերության մեջ): Մասնավորապես՝ մամուլի ու գրականության առումով մեր այսպիսի նախընտրությունը պայմանավորված է սեռականության, սեռի ու գենդերի (կնոջ դերի) խընդիրների անկյան տակ արևելահայ հրապարակախոսության և գրականության ուսումնասիրությունների սակավությամբ՝ ի համեմատ արևմտահայ մամուլի և գրականության մասին արդեն իսկ մանրակրկիտ բազմաթիվ հետազոտությունների:

Հարկ է շեշտել, սակայն, որ հետազոտական այս նախագիծը չի հավակնում ամփոփել սեռականության հարցի պես բարդ ու սոցիալ-քաղաքական կյանքին ածանցված թեման ամբողջությամբ: Այն բարձրաձայնում է հիմնահարցեր և բացում ապագա ուսումնասիրությունների նոր հեռանկարներ:

Տարբեր փորձառություններից եկող և տարբեր հայացքներ ու տեսանկյուններ բերող հետազոտող հեղինակները ուսումնասիրել են սեռականության հարցերի շուրջ առանձին աղբյուրների զանազան պատումները, տարաժամանակյա կենսապայմանները և սիրո ու սեռի հանդեպ արդիության պահանջներով պայմանավորված շրջադարձերը:

Հեղինակներից յուրաքանչյուրը սեռականության ձևակերպումների փնտրտուքի մեթոդաբանական մոտեցմամբ որոնել է և ըստ նյութի որոշել իր կոնկրետ ոլորտի ու շրջանի առանձնահատուկ առարկան: Արդյունքում բոլոր հետազոտողները, պատասխանելով նույն հարցերին, բացահայտել են զանազան սոցիալ-մշակութային շերտեր՝ խորացնելով սեռականության հայեցակարգը և դրանում տեղավորելով կնոջ իշխանության խնդիրը՝ վերափոխված արտամուսնական սիրային կապի իրավասության և մայրական իրավունքի, աղջիկների կրթության և ազգի մոր, կնոջ ընտանեկան դերի և հանրային կյանքի հակասության, երկսեռության և հայ կնոջ խնդրի, հայ կնոջ և ազատ սիրո լարումների, հայ կնոջ և Հայաստանի աշխարհավորուհու ներհակության, ցանկացած մարմնականի ոչնչացման և մարմնի պահանջի, մարմնի և հոգու պայքարների, կրոնական սիրերգի և սիրերգի քաղաքականության, սիրերգի մարմնական ու պաշտամունքային չափումների, սեռական հաճույքի առաքելական [ան]խանդորժողության և եկեղեցականների սեռական ասկեզիզմի պահանջի, ասիական-մահմեդական և քրիստոնեական բարոյականության պայքարների, նույնասեռ վարքի և եվրոպական արդիացմամբ ներմուծվող պապժիչ իրավակարգի, սոցիալական աստիճանակարգման նույնասեռ պրակտիկաների, խորհրդային ազատագրման (նույնասեռ վարքի ապաքրեականացման) նախագծի և սրայինյան ռեպրեսիվ համակարգի, նույնասեռական մարմնի շահագործման և քաղաքական շահարկումների ու շատ այլ հարցերի շուրջ մշակութային քննարկումներն ու բանավեճերը:

Այդպիսով, նախագիծն ինքնին վերածվել է հայկական համատեքստում սեռականության հատվածային պատումների մի ժամանակակից շարունակության: Այն բացել է սեռականություն կրող սուբյեկտների (ինքնա)ճանաչման ձևերի սահմանդիր գիտելիքի նոր հնարավորություն:

Տեղական սոցիալ-պատմական համատեքստում սեռականության դեռևս չհողավորված կամ չձևակերպված խորքերի, կապերի և հղումների, սահմանման փորձերի վերհանման մեր հեռանկարը նախևառաջ հենվել է, հետո նաև բացվել սեռականության տեսամեթոդաբանական ոչ միայն ֆուկոյական, այլև ֆեմինիստական հարա-ցուցային մոտեցումների միջոցով: Դա մեզ թույլ է տվել:

դիտարկել սեռականությունը իշխանության հետ անքակտելի պատմական կապի մեջ, ուսումնասիրել սեռականությունը սահման(ափակ)ող և սեռականության սուբյեկտներ ձևավորող աստիճանները, փորձել հասկանալ, թե ինչպես է հնարավոր իրենց օբյեկտով և կառուցվածքով խիստ տարբեր գիտելիքների ծագումը իշխանության միանման ձևերով (Фуко, М. (1996). *Забота об истине. Беседа с Франсуа Эвальдом. Воля к истине: По ту сторону власти и сексуальности. Работы разных лет.* (пер.: С. В. Табачникова). М.: Магистериум, Касталь. <https://bit.ly/2ZUDkVR>):

Այս իմաստով հետազոտության արդյունքներից էր բացահայտելը և նկարագրելը, թե ինչպես է հայկական համատեքստում պրակտիկաների և պատումների իրական բազմազանությունը փոխարինվում դրանց անփոփոխության դրույթով, որի ներքո իրականում ընկած են հարաբերականորեն կայուն ուրվագիծ ունեցող իշխանական պայքարի պրակտիկաները: Հատորի հետազոտական աշխատանքներում սեռականությունն իբրև իշխանական պայքարի գործիք օգտագործելու կայուն վարքագիծ ենք դիտարկում՝ անկախ տվյալ պատմական ժամանակաշրջանի քաղաքական գործողների անձից կամ սոցիալական խմբից. դա եղել է արդիական և թերևս շարունակում է մնալ արդիական:

Հայրիշխանական հասարակության և գրականության քննադատության ֆեմինիստական մոտեցումները մեզ օգնել են քաղաքականությունը դիտարկել իբրև խորքային իմաստով սեռականով և իշխանությամբ կառուցակցված հարաբերությունների ինստիտուտ, որտեղ մշտապես առկա է սեռի հարցը՝ քաղաքական ներիմաստներով (Millet, K. (2016). *Sexual Politics*. New York: Columbia University, Press, 24): Հայրիշխանությունը մեր հետազոտություններում բացվել է ոչ միայն իբրև տնային տնտեսության կազմակերպման առանձնահատուկ ձև, որի շնորհիվ հայրը հաստատում էր իր գերիշխանությունը ազգակցական ցանցի մյուս անդամների նկատմամբ և վերահսկում դրա տնտեսական արտադրությունը (Mitchel, J. (1984). *Women: The Longest Revolution*. New York: Pantheon Books, 10-11), այլև իբրև հետերոնորմատիվ առնականության գերիշխանության համընդգրկուն կարգ՝ կանանց և ոչ հետերոսեքսուալ մարդկանց սոցիալ-քաղաքական դրության վրա դրա ազդեցության տեսանկյունից: Հայրիշխանությունը ոչ միայն հասարակական կարգ կամ կառուցվածք է, այլև պատմականորեն մտքի սովորություն և կենսակերպ դարձած իրադրություն:

Հայկական իրողությունների մեջ հայրիշխանական մշակույթի և սեռի վերաբերյալ պատմական դիսկուրսների բացահայտումները երբեմն ճեղքում են մեր ներկա գիտելիքը, իսկ երբեմն էլ հնչում են իբրև ներկայիս տիրապետող դիսկուրսների արձագանքն անցյալում:

Հետևաբար, սոցիալ-պատմական ուսումնասիրություններով հղկված մեր հայացքը կարող է մեզ թույլ տալ հասկանալ մտքի ու ճշմարտության հարաբերությունների պատմությունը, հասկանալ, թե ինչպես է հնարավոր դարձել տվյալ գիտելիքի կառուցակցումը և տվյալ բարոյականության ծագումը (Փյոկո 1996):

Հարցն այն է, թե ինչպես և ինչու է պատահում, որ կոնկրետ մի պահի ինստիտուցիոնալ պրակտիկաների և ճանաչողական գործիքների միջոցով հանկարծ տվյալ սեռական վարքը ճանաչվում է իբրև *խնդրական*: Այստեղ կարևորը ոչ թե տվյալ բարքերի և վարքերի պատմությունն է, այլ այն եղանակների պատմությունը, որոնցով հաճույքը, ցանկությունը և սեռական վարքը դառնում են խընդրական, անդրադարձվում են և մտածվում որպես կոնկրետ տիպի կենսարվեստ:

Ինչպես Ֆուկոն նշում է 1984-ի գարնանը (իր մահվանից մի քանի ամիս առաջ) կայացած «Ճշմարտության հանդեպ հոգատարություն» Ֆրանսուա Էվալդի հետ հարցազրույցում (Փյոկո 1996), քաղաքացիական դեր կատարող ինտելեկտուալների գործն է վերոնշյալ հարցերի վերլուծության միջոցով վերստին հարցադրել ակնհայտությունները և հաստատված դրույթները, ցնցել մտքի և գործողության ձևերն ու սովորույթները, ցրել այն, ինչ ճանաչված է իբրև հայտնի, վերստին գնահատել կանոնները և կարգերը և, ելնելով այսպիսի վերախնդրականացումից, մասնակցել որոշակի քաղաքական կամքի ձևավորմանը:

Սա հենց այն ճանապարհն է, որով փորձում է անցնել այս հետազոտական նախագիծը՝ ընթերցողին ուղեկցելով դեպի հետերոնորմատիվ առնակենտրոն հասարակարգի խնդրականացում և դրա վերանայման ու փոփոխության հեռանկարներ:

Հատորն ունի չորս բաժին և մեկ հավելված:

1-ին՝ ***Սեռերն ու սեռերը հին շրջանում և միջնադարում*** բաժինն ընդգրկում է պատմական-գրական տեքստերի և Հայ առաքելական

Եկեղեցու կանոնագրքերի վերլուծության հիման վրա երկու հեղինակի առանձին աշխատանքներ:

Ժաննա Անդրեասյանի հետազոտական աշխատանքը ներկայացնում է գրական և պատմական երկերի միջոցով մինչքրիստոնեական և միջնադարյան շրջանում սեռականության պատումների որոշ դրվագներ՝ որպես մեկնակետ ընդունելով Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի «Տենչայր Սաթենիկ» հատվածը, միջնադարյան հայրեններն ու դրանց չափով հորինված տեքստերը, Գրիգորիս Աղթամարցու որոշ տաղեր և «Վարք Մարինոս» ճգնավորի պոեմը, ինչպես նաև Սայաթ-Նովան՝ իբրև արքունի երգիչ: Դրվագներն ընտրված են սեռականության պատումի շրջադարձերը ցույց տալու միտումով: Իբրև ելակետ ընտրված յուրաքանչյուր դրվագ այնուհետև բացվում է ժամանակի սոցիալ-քաղաքական և տնտեսական հարաբերությունների մեջ՝ մեկնաբանվելով այդ գործոնների համադրությամբ:

Հեղինակը քննում է հայոց պատմության հնագույն շրջանի և հատկապես վաղ միջնադարի մեզ հասած գրավոր խոսքի իշխանական կառուցվածքները: Դիտարկում է, թե ինչպես է սեռականությունը սահմանվում կոնկրետ խմբերի հանդեպ քաղաքականությամբ՝ թիրախավորելով տվյալ ժամանակում հակաիշխանական վտանգ ներկայացնողներին կամ այդպես մեկնաբանվողներին:

Հեղինակը երևան է բերում, որ տևական ժամանակ սեռականության մասին խոսքը, դրա գրավոր սահմանումն ու ձևակերպումն իրականացրել է Հայոց առաքելական եկեղեցին՝ պայմանավորելով սեռականության հանդեպ կոնկրետ դիրք՝ մարմնականի ճնշման և հաղթահարման անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, հետազոտությունը բացահայտում է մարմնականի ճնշման դիմադրությունները և դրանց միջոցով սեռականության շուրջ պատումների փոփոխությունը:

Հեղինակի կողմից առանձնացվող հանգուցային պատումներն են՝ սեռականության մինչքրիստոնեական պատումը, որում առանցքային դերակատարում ունի իշխանություն ունեցող կինը՝ որպես թիրախ, սեռականության վաղ քրիստոնեական պատումը, որում հանգուցային դեր է ստանձնում աշխարհիկ իշխանություն ունեցող տղամարդը և վերջինիս սեռականությունը՝ հասկացված իբրև մարմնական ցանկություններ և ինքն իրեն զսպելու անկարողություն, և մարմնի հաստատման պատումը:

Պատմական և գրական տեքստերին շարունակվող անդրադարձը մեր օրերում բացում է պատումների ուսումնասիրության ևս մի շերտ՝ արդի քաղաքականությունների դիրքից դրանց վերաներկայացման շերտը: Այս պատումները, հետևաբար, միայն պատմական չեն: Դրանք պատմականության շղարշի տակ վերասահմանվում են իբրև ժամանակակից տեքստեր՝ շաղկապվելով ներկայի իշխանությանն ու քաղաքականությանը՝ պատմականությունն օգտագործելով իբրև լեգիտիմության նոր աղբյուր:

Մարիամ Խալաթյանի հետազոտությունն անդրադարձ է վաղ միջնադարից մինչև 13-րդ դար ընկած ժամանակահատվածում կանոնական և կանոնախրավական առանցքային փաստաթղթերին: Ուսումնասիրվող ժամանակաշրջանն ասքի է ընկնում իր բարդ պատմական ընթացքով, ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքին եկեղեցական հարաբերություններում:

Աշխատանքն անդրադառնում է, մասնավորապես, սեռականության կարգավորման մեխանիզմներին՝ պատմահամեմատական ու ժամանակագրական զարգացումները ցույց տալու սկզբունքով: Ուսումնասիրվող առանցքային փաստաթղթերն են 8-րդ դարում կաթողիկոս Հովհան Օձնեցու Կանոնագիրքը, 12-րդ դարասկզբին հավաքագրված Դավիթ Ալավկաորդու Կանոնագիրքը, 13-րդ դարում Մխիթար Գոշի կողմից մշակված Դատաստանագիրքը:

Ուսումնասիրությունը մեկնում է այն հարցից, թե յուրաքանչյուր աղբյուր իր ձևավորման ու կիրառման ժամանակաշրջանում ինչ նշանակություն է ունեցել ու ինչ խնդիրներ է փորձել կարգավորել՝ նպատակ ունենալով ցույց տալ, թե վերոնշյալ ժամանակաշրջանում սեռականության հարցի շուրջ ինչ քննարկումներ են ընթացել, ինչպես է կարգավորվել հասարակության տարբեր խմբերի սեռականությունը:

Ըստ այդմ, հեղինակը, ներկայացնելով կանոնախրավական կարգավորումների ընդհանուր համատեքստը, արձանագրում է, որ վաղ միջնադարում եկեղեցու կողմից սահմանվող սկզբունքներն իրենց դերը ունեին հայկական հանրային կյանքի կազմակերպման և կարգավորման տարբեր բնագավառներում: Կազմավորման այդ փուլում եկեղեցին մշակում ու հաստատում էր իր սոցիալ-քաղաքական տիրապետության դասակարգային գաղափարախոսությունը և սահմանում խրատներ, հրահանգներ, կարգեր, որոնք հանդես էին գալիս որպես ընդհանուր կանոններ:

Այս անկյան տակ ուսումնասիրված աղբյուրները նաև մատնացույց են անում ժամանակի եկեղեցական իշխանության հիմնական թիրախներին: Հեղինակի բնորոշմամբ՝ սեռականության վերահսկումը ուսումնասիրվող աղբյուրներում հասկացվում է առավելապես իբրև սեռական վարքի վերահսկում: Այս իմաստով եկեղեցու կողմից սահմանված իրավական նորմերով վերահսկվում ու կարգավորվում էին հիմնականում եկեղեցականների, կանանց, նույնասեռական վարք ունեցող անձանց, ինչպես նաև աշխարհիկ տղամարդկանց սեռականությունը և ընտանեկան հարաբերությունները:

Ինչպես նշում է հեղինակը, հայ եկեղեցին ձևավորման դեռ վաղ շրջանում իր շուրջ էր կենտրոնացրել ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ ձգտելով իր ազդեցությունն ունենալ ընտանիքի ինստիտուտի վրա. ամուսնաընտանեկան հարաբերությունները չէին կարգավորվում առանց եկեղեցու միջնորդության: Այս նկրտումը թույլ է տալիս հասկանալ սեռականության իրավակարգավորման պրակտիկաների ելակետի ընդհանրությունը:

2-րդ՝ Նույնասեռական վարքի փիրապեպոդ (իրավա)կարգավորումները կայսերական գերիշխանության և հայկականության հատույթում բաժինը ներառում է ներկայիս Հայաստանի իրավակարգերի, իրավամտաճողության ու մշակույթի ձևավորման անմիջական արմատները քննող պարսկական և ռուսական կայսրությունների, ինչպես նաև Խորհրդային Միության կողմից նույնասեռական վարքը կարգավորող իրավակարգերը և դրանց քաղաքական ու մշակութային հետնախորքերը:

Հրայրա Հակոբյանի վերլուծությունը անդրադառնում է մինչ օրս մեզ անհայտ և բարդ խնդրի, ինչպիսին նույնասեռականության վերահսկումն է պարսկական իրավունքի ներքո: Հեղինակը հետազոտական խնդիրն ուսումնասիրում է Սեֆյան դինաստիայի իշխանության առաջին և երկրորդ շրջանների օրենքի գերակայության, Աֆշարյան դինաստիայի և կիսանկախ խանությունների իշխանության, ինչպես նաև Ղաջարական Իրանի իրավական վերահսկման ներքո՝ այդպիսով, երևան բերելով նույնասեռականության վերահսկման քաղաքականությունները 16-19-րդ դարերի իրանական կայսրությունում, որի սահմաններում էին գտնվում ներկայիս Հայաստանի մաս կազմող հայկական համայնքներ: Ըստ հեղինակի պարսկական

իրավակարգի առանձնահատկությունն այն է, որ երկու համահավասար լեզվախմբային ուժ ունեցող մակարդակներից է բաղկացած՝ սովորության կամ բարքերի շերտը և իրավաօրենսդրական շերտը: Ուսումնասիրված դարաշրջաններում պարսկական կայսրության մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ դրա ենթակա կրոնական համայնքներն ունեին սեփական սովորության բարքով ապրելու իրավազորություն: Պարսկական իշխանության երեք հարյուր տարում հայկական համայնքը, միաժամանակ լինելով երկրի պարսկական իշխանության վերահսկման հովանոցի ներքո, հատկապես կենցաղային և ընտանեվարական և սեռականության հարցերով ենթարկվել է ներհամայնքային սովորույթի՝ հայոց եկեղեցու կարգին: Հայկական եկեղեցու իրավակարգային դաշտը նույնասեռական վարքի նկատմամբ առավել մեղմ էր, քան նախատեսվում էր շիայական իրավունքը: Սակայն թողնելով հայոց եկեղեցու կարգավորման բովանդակային կողմը (այդ հարցի անդրադարձը տեղ է գտել *Մարիամ Խալաթյանի* հոդվածում)՝ այս աշխատանքը կենտրոնանում է նույնասեռական վարքի նկատմամբ պարսկական իրավակարգի սովորության ու իրավաօրենսդրական շերտերի գործնական հակասություններին: Հեղինակը, ուսումնասիրելով պատմական և կրոնաիրավական մի շարք աղբյուրներ, բացահայտում է որ հատկապես նույնասեռ կապի առնչությամբ պարսկական շիայական օրենքները լուռ շրջանցվում էին դրանց պահանջների հանդեպ հակադրության մեջ գտնվող հոմոէրոտիկ մշակույթին:

Աննա Ժամակոչյանի և *Էդուարդ Դանիելյանի* հետազոտական աշխատանքը բաղկացած է երկու առանձին հոդվածից: Առաջին հոդվածում ներկայացվում են նույնասեռականության իրավական վերահսկման մոտեցումները ցարական Ռուսաստանում, իսկ հետո կայսրությունում և դրանց փոխակերպումները քաղաքական արդիացմանը և եվրոպականացմանը զուգընթաց: Հեղինակները դիտարկում են, թե ինչպես է ռուսական կայսրության եվրոպականացումը հանգեցնում նույնասեռական վարքի հանդեպ խստացված քաղաքականությունների ի հայտ գալուն և դրանց արմատավորմանը՝ ի հակառակ նախկին մեղմ կրոնական կարգավորումների: Հեղինակները ցույց են տալիս կայսերական օրենքների ազդեցությունը արևելահայ առաջին աշխարհիկ օրենսգրքի՝ Աստրախանի հայոց դատաստանագրքի (1765) վրա: Նաև քննում են արդիության շրջա-

նի (18-րդ դարի) արևելահայ իրավակարգերի մյուս մշակումներում («Որոգայթ փառաց», «Տետրակ, որ կոչի նշավակ») նույնաստեռական վարքը կարգավորող նորմերի առնչությունը հին հոռմեական իրավունքին, միջնադարյան ավանդույթը պահպանող բրիտանական իրավունքին և եվրոպական լուսավորական շարժմանը:

Աննա Ժամակոչյանի և *Էդուարդ Դանիելյանի* երկրորդ հոդվածում նույնաստեռականության հանդեպ վերաբերմունքը դիտարկվում է խորհրդային շրջանի իրավաքաղաքական գործընթացների համատեքստում՝ նախ հեղափոխական ազատագրական միտումի և հետո արդեն ստալինյան բռնաճնշումների և դրան հաջորդած ձնհալի, բրեժնևյան նորստալինականության և «պերեստրոյկայի» փուլերում: Մասնավորապես հեղինակները ներկայացնում են հեղափոխական, այդ թվում՝ «սեռական հեղափոխության» օրակարգերով հիմնված Խորհրդային Միության (որի մաս էր կազմում նաև Հայաստանի Սոցիալիստական Հանրապետությունը) նախանական շրջանի առաջադիմական իրավաքաղաքական լիցքը և ստալինացման հետևանքով դրա ձախողման պատմությունը: Ըստ հետազոտողների՝ Խորհրդային «սեռական հեղափոխության» ձախողման՝ անընդհատ երևան եկող հետքը դիտարկվում է մինչ օրս՝ հասնելով ներկա հետխորհրդային Հայաստանի առօրյա: Քննելով ծագումով հայ, հայտնի խորհրդային կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի կյանքի թաքուն պահվող նույնաստեռական/երկսեռական կողմը՝ հետազոտողները բացահայտում են խորհրդային բռնաճնշիչ վարչակարգերի կողմից քաղաքական նպատակներով անձի նույնաստեռական վարքի շահարկման դաժանությունը և դրա ողբերգական հետևանքները:

Երկու հոդվածն էլ կառուցվում են մետրոպոլիա(ներ)ում (տղամարդկանց միջև) նույնաստեռական վարքի իրավակարգերի փոխակերպումները քննելու և հայերի ու Հայաստանի վրա դրանց փոխազդեցությունները դիտարկելու, ինչպես նաև այս գործընթացների պատմական հետնախորքերը ու քաղաքական նպատակները բացահայտելու սկզբունքով: Հետազոտողները հետևում են, թե ինչպես են Ռուսաստանում և Խորհրդային Միությունում քաղաքական և գաղափարական հոսանքների միջև պայքարի դաշտերում ձևակերպվող նույնաստեռական վարքի հանդեպ քաղաքականությունները (հետադիմական-ռևիզիոնիստականից մինչև ազատագրական-հեղափոխական և հակառակը) անդրադառնում առանձին անհատների կյանքի և հայկական իրավաքաղաքական մշակույթի ներկայի վրա:

3-րդ՝ «Կնոջ խնդիրը» արևելահայ արդիության առարկա բաժինը ներկայացնում է հայկական արդիության շրջանի հետ ի հայտ եկած անելահայ մամուլի, գրականության տեքստերի, ինչպես նաև խորհրդային արդիացման նախագծի ներքո խորհրդահայ քաղաքականությունների մասին առանձին երեք վերլուծություն:

Լուսինե Չերգեշյանի հետազոտությունը ներկայացնում է և ամփոփ ներկայացնում 19-րդ դարի և 20-րդ դարասկզբի գլխավորապես արևելահայ պարբերական մամուլում տեղ գտած հրապարակախոսական դիսկուրսը ժամանակի կանանց և աղջիկների կրթության և դաստիարակության, ընտանեկան և ամուսնական կյանքի, ազատագրության հեռանկարի հիմնահարցերի շուրջ:

Չերգեշյանը ներկայացնում է այս հիմնահարցերը ներամփոփող «կնոջ խնդիր» ըմբռնումները, որոնք խարսխված էին ժամանակի լուսավորական գաղափարաբանությունից բխող հայերի՝ իբրև ազգի կայացման ու քաղաքակրթման հրամայականների վրա:

Հեղինակը երևան է հանում ժամանակի առաջադեմ-լուսավորական և պահպանողական հասարակական-քաղաքական հոսանքները ներկայացնող հրապարակագրերի գաղափարական բախումներն ու ներհակությունները կնոջ հասարակական դերակատարման և ընտանիքի ինստիտուտի բարեփոխման շուրջ: Այս բախումների համատեքստում ուրվագծվում են նաև լուսավորական-քրիստոնեական բարոյականության և արժեհամակարգի սահմանները. ազգի արդիականացման ծրագրի բարեհաջող իրագործման համար կնոջ վրա դրվում էր դաստիարակչական և կրթական գործառույթ՝ իբրև ազգային բարոյական դիմագիծը կերտող մայր:

Այսպիսով, հեղինակը բացահայտում է 19-րդ դարի և 20-րդ դարասկզբի լուսավորական գործընթացների ներքո սկզբնավորված հրապարակախոսական դիսկուրսը կնոջ երկու հիմնական ըմբռնումի շուրջ. կինը՝ իբրև նախասահմանված սեռականություն, և կինը՝ իբրև իրավահավասար սուբյեկտ:

Հետազոտությունը երևան է բերում ժամանակաշրջանի բարդ ու լարումներով լի սոցիալ-քաղաքական համատեքստը, հարուստ է ծանոթագրություններով և ակնարկներով, որոնք կարող են տեղ բացել նոր հարցադրումներով ուսումնասիրությունների համար:

Արփի Մանուսյանի հետազոտական էսեն 19-րդ դարի երկրորդ

Կեսի ռուսահայ լուսավորական նախագիծը գործադրող որոշ գրական գործիչների (Միքայել Նալբանդյան, Ռաֆայել Պատկանյան, Ղազարոս Աղայան, Րաֆֆի, Գրիգոր Արծրունի, Մարիամ Խատիսյան) ստեղծագործություններում «կնոջ խնդրի» ձևակերպման և ըմբռնման անդրանիկ սոցիոլոգիական քննություն է:

Այն վեր է հանում տեղի առաջադեմ համարվող տղամարդ գրական գործիչների՝ կնոջ սոցիալական դերերի ըմբռնումները և դրանց վերաիմաստավորումները հասարակական-քաղաքական բարդ ու ներհակություններով լի գործընթացի ներքո, որ հռչակում էր հայերի՝ իբրև ազգի արդիականացման հրամայականը և եվրոպական լուսավորականության ոգով դրա քաղաքակրթումը:

Հեղինակն իր քննադատական հայացքն ուղղում է *արական* գրական ժառանգությանը և ավանդույթին, որոնց ներքո մտածվում էր կինը սոցիալ-մշակութային, իրավական, տնտեսական և քաղաքական բազմազան հիմնախնդիրների հետ առնչության մեջ: Այդ մտածման կարևոր գործընթացում, սակայն, կինն ինքը մնում էր աննկատ ու անլսելի. ստորադասված և հանրային կյանքի լուսանցքում մնացած կինը 19-րդ դարի երկրորդ կեսից ուշադրության է արժանանում տղամարդ լուսավորիչների կողմից՝ դիտարկվելով իբրև մայր ու սերունդների կրթիչ-խնամատար հանուն ազգային զարթոնքի:

Հեղինակն առերեսում է արական գրական ավանդույթի խոր արմատներին ու ազդեցություններին, երբ առանձնակի ուշադրությամբ վերլուծում է ռուսահայ թերևս առաջին կին վիպագրի՝ Մարիամ Խատիսյանի գեղարվեստական ժառանգությունը և հանրային գործունեությունը: Խատիսյանի միջոցով հաղորդակից լինելով կնոջ կողմից «կնոջ խնդրի» ձևակերպմանը՝ հեղինակը նկատում է վերջինիս ստեղծագործություններում կանանց մասին արական պատկերացումների վերարտադրության շրջանակը՝ միաժամանակ բացահայտելով կնոջ վատթար դրության դեռևս չքննված ցաքուցրիվ ըմբռնումներ և այդ դրությունից դուրս գալու երկչոտ փորձեր: Սեռի հարցի սոցիալ-պատմական հետազոտության համատեքստում Խատիսյանի ժառանգությունն ուսումնասիրելու այս անդրանիկ փորձը ուրվագծում և դիպչում, սակայն ողջ խորությամբ չի քննում ռուսահայ միջավայրում ձևավորված կին հանրային և գրական գործիչերի «երկչոտ ֆեմինիզմի» առանձնահատկությունները: Այդուհանդերձ, այն տեղի ֆեմինիստական մտքի և կանանց գրական ժառանգու-

թյան ու ավանդի շուրջ նորանոր հետազոտությունների հեռանկարներ է բացում:

Իրինա Շախնազարյանի հետազոտական աշխատանքը 1920-ականների Խորհրդային Հայաստանում սկզբնավորված կնոջ ազատագրման ծրագիրը հասկանալու կարևոր մեկնակետ է և փորձ՝ դիտված Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Հայաստանի քաղաքականությունների փոխկապակցվածությունների և առանձնահատկությունների համատեքստում:

Հեղինակը հետազոտական խնդրին մոտենում է Խորհրդային Հայաստանի Կին բաժնի գործունեության արխիվային փաստաթղթերի, կանանց շրջանում տարված աշխատանքներում համամիութենական նշանակություն ունեցած որոշումների, օրենքների, *Հայաստանի աշխատավորուհի* հանդեսում հրատարակված նյութերի դիսկուրսի ուսումնասիրության միջոցով՝ բացահայտելով կանանց ազատագրության խորհրդային հռչակված քաղաքականությունների ու օրենքների և տեղի կենցաղի ու բարքերի միջև ընկած լարումներն ու ներհակությունները: Ուրվագծելով կանանց ազատագրության խորհրդային քաղաքականության պրոլետարական պայքարի ճակատներից մեկը լինելու հանգամանքը միայն՝ հետազոտությունն այս տեսանկյունից արձագանքում է 19-րդ դարի ռուսահայ լուսավորական-ազգակերտիչ նախագծին, որի ուղեծրում «կնոջ խնդիրը» ածանցված էր ազգի կայացման ու քաղաքակրթման լուսավորական նախագծից:

Հեղինակը ի հայտ է բերում 1920-ականների խորհրդային այնպիսի քաղաքականություններ, որոնք ուղղված էին կանանց և տղամարդկանց փաստացի հավասարության հաստատմանը, պետության կողմից երեխայախնամ գործառույթի ստանձնմանը, որ կհանգեցնեք կանանց հասարակական և տնտեսական կյանքում ներառմանը, հղիության արհեստական ընդհատումն օրինականացնող որոշմանը, միաժամանակ բացահայտելով 1930-ականների ստալինյան քաղաքականությունների հետադիմական փոխակերպումները, որոնք կանանց ազատագրության ծրագրի ավարտի ազդարարումն էին և հետդարձը դեպի ընտանիքի ավանդական պատկերացումը:

4-րդ՝ ***Տարածամանակյա ձայներ*** բաժնում զետեղված են երկու տարբեր ժամանակներից և տեղերից հնչող խոսք, որոնցից մեկը

արևմտահայ կին գործիչ Մարի Բեյլերյանի հողվածի վերատպու-
թյունն է, իսկ մյուսը ժամանակակից փիլիսոփա Պոլ Բ. Պրեսիադոյի
հրապարակախոսական հողվածի թարգմանությունը:

*Մարի Բեյլերյանի*² (արևմտ.՝ Մառի Պեյլե-
րեան) «Կինը և հանրայինը կարծիքը» հող-
վածը 1904 թվականին տպագրվել է հայ կա-
նանց հեղինակած *Ոստիկ*³ հանդեսի առա-
ջին հատորում, որի ակնկալվող երկրորդ
հատորն այդպես էլ լույս չտեսավ:

Բեյլերյանի առաջնորդող հողվածը կա-
նանց՝ հանրային կարծիքի բեռի տակ ճրկ-
ված ու ճնշված դրության մերկացնող մի
մանիֆեստ է, որ բարձրաձայնում է կանանց
և, մասնավորաբար, հայ կանանց բաժին ըն-
կած «*ինչ պիտի ըսեն*»-ի պատմական մտա-
ծումը: Բեյլերյանը քննադատում է սոցիալ-
պատմական այն դրությունը, որում տղամարդիկ մշտապես ընդար-
ձակ հնարավորություններ են ունեցել խորհելու, գրելու ու գործելու,
մինչդեռ կանայք, մշտապես կաշկանդված ու վախեցած հանրային
կարծիքի դամոկլեսյան սրից, դարձել են տղամարդկանց կարիքների
ու հաճույքների հպատակը: Բեյլերյանը կոչ է անում կանանց պայքա-
րել հանրային կարծիքի արհավիրքի դեմ՝ լսելով սեփական ձայնին
ու խղճին, զարկ տալով կանանց դաստիարակությանը և ճանաչելով
սեփական արժանապատվությունն ու համոզմունքները:

Բեյլերյանի ձայնը լսվում է հեռվից, սակայն նրա մերկապարանոց
և սուր դատողությունները ամուսնության, զավակածնության և ըն-
տանիքում կնոջ ենթակայության անքննելի թվացող հիմնախնդիր-
ների շուրջ մեծապես արձագանքում են ներկա Հայաստանում կա-
նանց հանրային կարծիքից ճնշված ու կաշկանդված դրության հետ՝
երևան բերելով սեռի հարցի քաղաքական ու պատմական բովան-
դակությունը:

Պոլ Բ. Պրեսիադոյի՝ Լիբերասիոն օրա-
թերթում⁴ 2018 հունվարի 16-ին հրապարակ-
ված «Տրանս տղամարդու նամակը սեռային
հին ռեժիմին» հողվածը արձագանքն է այն

2. Մարի Բեյլերյանը (1877-1915) պոլսահայ հասա-
րակական գործիչ է և խմբագիր: 1902-1903 թթ.
հիմնել է և խմբագրել *Արլոենիս* գրական հանդեսը:

3. Սաթունեան, Հ., Ջանունեան, Գ. (խմբ.). (1904).
Ոստիկ. հայ կանանց ժողովածու. Ալեքսանդրապոլ.
տպ. Յովհ. Ափինեանի:

Ժողովածուում ընդգրկված են բանաստեղ-
ծություններ, թարգմանություններ, հրապարակա-
խոսական հողվածներ, վիպակներ, քննադա-
տություններ, հասարակագիտական տեքստեր:
Ժողովածուի հեղինակներն իրական և կեղծ
անուններով հանդես եկող կանայք են՝ Մարի Բեյ-
լերյանը, Տ. Ջանազան Մեհրաբյանցը, Տ. Թագու-
հի Բերբերյանը, Տիրուհի Կոստանյանցը, Սիպիլը,
Օր. Գայանե Կայալյանը, Տ. Եփ. Պալյանը, Օր.
Հ. Մելիք-Հակաբյանը, Ս. Վ. Արղության-Երկայ-
նաբազուկը, Տ. Մարիանը, Օր. Ե.Հ-ն, Տ. Բյուրեղը,
Ձ. Ալյանաքը:

4. Լիբերասիոնը հիմնադրվել է 1973-ին՝ Ժան-Պոլ
Սարտրի շուրջ հավաքված և ծախս արմատական
(մաոիստական) հայացքներ ունեցող մի քանի
լրագրողների կողմից՝ նախապես զբաղեցնելով
քաղաքական դաշտի ծայրահեղ ծախս թևը:
Տարիների ընթացքում օրաթերթը տեղաշարժ է
կատարել դեպի կենտրոն՝ ամրապնդվելով ծախս
կենտրոնամետ դիրքում և դառնալով առավելապես
սոցիալ-դեմոկրատական ուղղվածության լրատվա-
միջոց: Պրեսիադոն 2013 թվականից ակտիվորեն
թղթակցում է Լիբերասիոնին (հրապարակած
տեքստերի թիվը հասնում է շուրջ ինը տասնյակի):

քննարկումների, որոնք թափ էին առել 2017 թվականին՝ Հոլիվուդի հայտնի կինոպրոդյուսեր Հարվի Վայնսթեյնի դեմ հնչող մեղադրանքներում և շոշափում էին տղամարդկանց կողմից՝ իրենցից կախվածություն ունեցող կանանց հանդեպ սեռական ոտնձգությունների խնդիրը:

Պոլ Բ. Պրեսիադոն իր հոդվածով, մի կողմից, պաշտպանում է սեռական ազատությունները ֆեմինիստական շարժումից եկող սահմանափակություններից, մյուս կողմից՝ դեմ է դուրս գալիս սեռական պրակտիկաների հետերոնորմատիվ դրսևորումներին և դրանցով ի հայտ եկող հակասություններին ու բախումներին:

Քուիր շարժման ակտիվիստ, պոռնոգրաֆիկ գրականության և կինոյի փարիզյան ընդհատակը ներկայացնող Պրեսիադոն սովորել է Նյու Յորքի Սոցիալական հետազոտությունների նոր դպրոցում (New School for Social Research)՝ աշակերտելով, մասնավորապես, Ժակ Դերիդային և Ագնես Հելլերին:

Նրա փիլիսոփայությունը տոգորված է պոստստրուկտուրալիզմի առանցքային դեմքերի՝ Միշել Ֆուկոյի և Ժիլ Դելյոզի ստեղծած հղացական ապարատներով:

Գրքի հավելվածն ամբողջովին արտացոլում է *Լուսինե Չերգեշոյանի* կազմած «Կանանց և սեռականության հարցերը 19-րդ դարի հայ պարբերական մամուլում» մատենագիտական ցանկը: Այն հավաքագրվել է հեղինակի սույն հատորում ընդգրկված հոդվածի վրա աշխատելու ընթացքում: Նյութերի առանձնացման համար չափանիշ են ընտրվել կնոջը, մայրությանը, ընտանիքին, բարոյականությանը, աղջիկների դաստիարակությանն ու կրթությանը, ամուսնությանը, կին-տղամարդ հարաբերություններին, աշխատանքին, սիրուն և կանանց հասարակական գործունեությանը վերաբերող թեմատիկ հրապարակումները:

Ցանկում ընդգրկված են հայաբնակ տարբեր վայրերում՝ 1830-ականների վերջից մինչև 1920-ականներ հրատարակվող պարբերականներում զետեղված հրապարակախոսական, բարոյախրատական և դաստիարակչական հոդվածներ, հետազոտական և գիտական աշխատություններ, թարգմանություններ, գրական ստեղծագործություններ, գրախոսականներ, հայտարարություններ,

ազգագրական և բազմաբնույթ այլ նյութեր, որոնք այս կամ այն կերպ վերաբերում են կամ կարող են օգտակար լինել կնոջ հասարակական դերի վերախմաստավորման խնդիրն ուսումնասիրելու համար:

Մատենագիտական ցանկը թեև համալրման տեղ ունի, այնուամենայնիվ, հրաշալի օգնական է 19-20-րդ դարերի հրապարակախոսական դիսկուրսում կանանց և սեռականության հարցերը ուսումնասիրող կամ դրանցով հետաքրքրվող հետազոտողներին ու հետաքրքրված ընթերցողներին: